

«Շատ կը փափագին (Նոր Զուգայեցիք) միանալ Հռոմէական Եկեղեցւոյ հետ, որուն վարդապետութիւնը առ հասարակ կ'ընդունին, համարելով թէ հոն որ եւ է մոլորութիւն չկայ. թէպէտ անոնց ըսելու կերպէն կ'երեւայ թէ ի Քրիստոս մի բնութիւն կը խոստովանին, սակայն հասկնալու եւ մեկնելու կերպին մէջ մերինէն չեն տարբերիր. որովհետեւ կ'ըսեն թէ ի Քրիստոս մէկ բնութիւն միայն կայ, բայց առանց այլայլման, այս ինքն բաժանման. այնպէս իմանալով թէ ստացուած բնութիւնը չ'այլայլեր աստուածեղէն բնութիւնն, որ կայ ի նմա էապէս :

«Սովոր են ըսել թէ Ֆրանկներն եւ Հայերը երկու սիրելի եղբայրներ էին, որոնք շատ ժամանակ յառաջ բաժնուած են իրարմէ եւ հեռացած. այժմ նորէն մերձեցած են ընդգրկելու զիրար անպատում ուրախութեամբ: Այս նմանութեամբ կ'ուզեն արտայայտել այն մեծ փափագը, զոր ունին կաթողիկէ Եկեղեցւոյ հետ միութեան մէջ ապրելու համար. յայտնապէս կ'ըսեն թէ իրենք չունին մասն եւ բաժին անոնց հետ, որոնք հերձուածին եւ բաժանման պատճառ եղած են. եւ թէ այնպիսիները այս նկատմամբ Տեառն Աստուծոյ խիստ հաշիւ պիտի տան :

«Ոմանք կը փափագին Հռոմ դալ եւ ճանչնալ նորին Սրբութիւնն եւ անոր օտքը համբուրել: Չեմ կասկածիր թէ երբ իրենց եւ առաքելական Աթոռի միջեւ դիւրանան հաղորդակցութիւնները, եւ բացուի Հռոմի մէջ տուն